ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

производительность, положительные экстерналии образования

В статье рассмотрены возможные причины возрастающей отдачи при эмпирической проверке моделей экономического роста с учетом человеческого капитала. Автором предложен новый подход к оценке роли человеческого капитала в экономическом росте стран. В частности, рассмотрена предпосылка возрастающей отдачи человеческого капитала.

FIRUZA MAYILYAN

ACCEDING EFFECT IN MODELS OF ECONOMIC GROWTH

Key words: *human capital, economic growth, return to scale, innovation economy, model of growth, decreasing marginal productivity and positive externalizes of education*

In this article were found out reasons of acceding effects of models of economic growth by using empiric test by considering the human capital. The author suggests a new way to value the role of human capital in the economic growth of countries. There were considered, particularly, premises of acceding effect of human capital.

ԿԱՐԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *հարկային քաղաքականություն, բարեփոխումներ, հարկային համակարգ, ֆիսկալ գործառույթ, տնտեսության զարգացում, հարկային օրենսգիրք*

Հարկային քաղաքականությունը, որպես սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ, սահմանում է ձևավորվող հարկային համակարգի նպատակները:

Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք, իրենց հերթին, ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը հանգեցնում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի:

Հարկային քաղաքականությունը, որպես սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ, սահմանում է ձևավորվող հարկային համակարգի նպատակները: Հարկային քաղաքականությունն իշխանության և կառավարման մարմինների իրավական գործո-

ղությունների համալիր է, որը որոշում է հարկային օրենքների նպատակային կիրառումը: Հարկային ճիշտ քաղաքականության վարումը, ճկուն հարկային համակարգի մեխանիզմի մշակումն ու իրագործումն ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ կարևոր սոցիալական և քաղաքական նշանակություն:

Հարկային քաղաքականության իրականացման ժամանակ մեծ նշանակություն ունեն մակրոտնտեսական իրավիճակի ճիշտ գնահատումն ու կանխատեսումները, մակրոտնտեսական ցուցանիշների արժանահավատությունը, երկրի ներսում և դրանից դուրս իրականացվող տնտեսական ու քաղաքական գործընթացները: Արդյունավետ հարկային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ է ճիշտ ընտրել տնտեսության պետական կարգավորման ուղղվածությունը կամ տեսությունը և հստակ ձևակերպել տնտեսության զարգացման գերակայություններն ու առանձնահատկությունները:

Պետության հարկային քաղաքականությունը նշանակալիորեն ազդում է զբաղվածության և գների մակարդակների վրա, ինչը տարբեր երկրների կառավարությունները օգտագործում են տնտեսության վրա ազդելու և այն ցանկալի հունով զարգացնելու համար: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ զարգացած երկրներում հարկային քաղաքականության միջոցով պետություններն ուղղակի և անուղղակի ձևով ազդում են ամբողջական պահանջարկի և առաջարկի վրա՝ կարգավորելով մակրոտնտեսական իրավիճակը: Տնտեսական անկման փուլում հարկաբյուջետային լծակներն օգնում են ակտիվացնել տնտեսական կյանքը, իսկ տնտեսության վերելքի փուլում կիրառվում է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն: Տնտեսության կայունացման անհրաժեշտության դեպքում պետությունը, ամբողջական պահանջարկի և առաջարկի վրա ազդելով, երկրի համախառն արդյունքը մոտեցնում է իր ներուժային մակարդակին՝ ապահովելով զբաղվածության բարձր մակարդակ՝ առանց գնաճի թույլատրելի սահմաններից շեղումների:

Հենց հարկային քաղաքականության միջոցով էլ պետությունը կարող է ուղղակիորեն ազդել ամբողջական առաջարկի և պահանջարկի վրա, եթե անմիջականորեն մասնակցում է արտադրական գործընթացին[1]: Ամբողջական ծախսերում պետական ծախսումները զգալի մաս են կազմում, մասնավորապես՝ զարգացած երկրներում այդ բաժինը հասնում է համախառն արդյունքի 10-20 տոկոսին, ինչը հնարավորություն է տալիս ազդելու ամբողջական պահանջարկի վրա: Ամբողջական պահանջարկի մնացած բաղադրիչների վրա պետությունն անուղղակի կերպով նույնպես կարող է ազդել հարկային քաղաքականության մյուս գործիքների միջոցով: Օրինակ՝ սպառողական պահանջարկի վրա պետությունը կարող է ազդել եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխմամբ: Եթե արդյունքում կրճատվում է անձնական տնօրինվող եկամուտը, ապա եկամտից սպառմանն ուղղված մասը ևս կփոքրանա: Սպառողական պահանջարկի վրա ազդում է նաև ավելացված արժեքի հարկը՝ չնայած այն գանձվում է վաճառողից: Սա պայմանավորված է նրանով, որ արտադրողներն ու ծառայություններ մատուցողները ավելացված արժեքի հարկը ներառում են իրենց ծախսերի մեջ և իրականում հանդես են գալիս որպես հարկի

[1] Մ. Մելիքյան, Հարկային քաղաքականության տեսական հիմունքները, Եր., 2013, էջ 84–86:

սկզբնական հասցեատերեր, իսկ հարկ կրողները դառնում են սպառողներ: Ուստի ԱԱՀ ավելացումը կարող է հանգեցնել սպառողական պահանջարկի փոքրացման:

Գործնականում ոչ միայն եկամտային հարկի և ԱԱՀ-ի, այլև մյուս հարկերի կրճատումն ավելացնում է տնօրինվող եկամուտները, որն էլ բերում է սպառման մեծացման:

Հարկային քաղաքականությամբ պետությունը կարող է ազդել նաև ներդրումային պահանջարկի վրա: Այսպես՝ ներդրումները խթանող հարկային քաղաքականությունը հիմնականում հանդես է գալիս հարկային արտոնությունների, մասնավորապես՝ նվազեցված դրույքաչափերի, ներդրումային հարկային վարկերի, ներդրումային նվազեցումների և արագացված ամորտիզացիայի տեսքով:

Ինչ վերաբերում է զուտ արտահանման պահանջարկի փոփոխություններին, ապա այստեղ ևս պետությունը կարող է ազդել արտահանման և ներմուծման վրա մաքսերի միջոցով: Մաքսը, ըստ էության, հարկ է, որը պետությունը գանձում է ապրանքների և նյութական այլ արժեքների արտահանման և ներմուծման համար՝ համաձայն սահմանված դրույքաչափերի:

Բացի ամբողջական պահանջարկից, պետությունը հարկային քաղաքականությամբ կարող է ազդել նաև ամբողջական առաջարկի վրա: Ամբողջական առաջարկի վրա հարկային լծակների ազդեցության մասին քննարկումները հիմք են հանդիսացել առաջարկի տնտեսագիտության ձևավորման համար: Առաջարկի տեսությունը կառուցված է հարկերի կրճատման անհրաժեշտության հիմնավորման վրա՝ ըստ որի կարող է արձանագրվել բնակչության և կազմակերպությունների եկամուտների աճ՝ միաժամանակ խրախուսելով ներդրումները: Այս տեսության համաձայն՝ հարկերի կրճատումը մեծացնում է ամբողջական առաջարկը և եկամուտները, ինչը ոչ միայն չի կրճատում բյուջեի մուտքերը, այլև երկարաժամկետ հատվածում խթանում է գործարար ակտիվությունը և ընդլայնում հարկման բազան:

Հարկային քաղաքականության հիմքում պետք է լինի հարկերի ֆիսկալ և կարգավորիչ գործառույթների զուգակցումը: ՀՀ հարկային համակարգի դիտարկումը ցույց է տալիս, որ հարկային քաղաքականության մեջ, հիմնական հարկատեսակների առումով, գերակշռում է ֆիսկալ գործառույթը[1]: Սրա մասին են վկայում նաև ՀՀ հարկային պրակտիկայում այնպիսի հարկատեսակների հաճախակի կիրառումը, ինչպիսիք են հաստատագրված վճարը, շրջանառության հարկը, արտոնագրային վճարը: Նման հարկատեսակները թեև ունեն հաշվարկման պարզություն և վերահսկման ավելի մեծ հուսալիություն, սակայն դրանցում չեն պահպանվում այնպիսի կարևոր սկզբունքներ, որպիսիք են ըստ ստացած օգուտների հարկման սկզբունքը, արդարության սկզբունքը և այլն: Մինչդեռ զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ հարկատուների օրինապահության մակարդակը բարձր է հատկապես այն երկրներում, որտեղ հարկերի մյուս գործառույթները ևս ունեն առաջնակարգ դեր: Այսինքն՝ այն երկրներում, որտեղ հարկային համակարգում գերակշռում են հարկման մյուս՝ *խթանիչ*, *կարգավորիչ*, *սոցիալական* և այլ գործառույթները, հարկատուների շրջանում ձևավորվում է այն գիտակցությունը, որ հարկերն

[1] Բ. Մարտիրոսյան, Հարկեր և հարկագանձում, Եր., 2015, էջ 168:

այն վճարն են կամ գինը, որն իրենց համար ապահովում է պետական աջակցության երաշխիքներ:

Ներկայումս ՀՀ-ում հարկային քաղաքականությունում առկա հարկատեսակները կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված եկամուտները 2013–2016 թթ.: Ինչպես կարելի է նկատել աղյուսակից, ՀՀ ներկա հարկային քաղաքականության իրականացման պարագայում գանձված մուտքերից առավել խոշոր են մասնավորապես՝ ԱԱՀ-ն, եկամտային հարկը և շահութահարկը:

Աղյուսակ 1

2013–2016 թթ. հավաքագրված հարկային եկամուտներ[1]

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն դրամ)	2013	2014	2015	2016
ԱԱՀ	401,943.7	440,361.4	423,933.5	391,087.7
Շահութահարկ	124,597.8	103,597.4	103,659.9	127,086.5
Եկամտային հարկ	274,494.8	289,159.9	311,720.9	332,778.8
Ակցիզային հարկ	52,133.5	50,560.4	48,988.9	59,745.2
Շրջանառության հարկ	13,397.4	15,638.6	11,859.4	15,259.6
Արտոնագրային վճարներ	6,833.7	6,690.0	6,570.8	6,287.8
Հաստատագրված վճարներ	11,041.1	3,178.5	3,105.0	3,203.0
Մաքսատուրք	44,290.7	48,397.1	61,487.5	55,428.5
Այլ հարկային եկամուտներ	69,804.4	48,824.3	11,281.9	13,254.5
Ընդամենը՝ հարկային եկամուտներ	972,187.1	1,018,797.6	1,033,239.0	1,044,984.5
Պետական տուրք	27,287.4	39,281.8	32,405.2	33,309.7
Ընդամենը՝ հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	**999,474.5**	**1,058,079.4**	**1,065,644.2**	**1,078,294.2**

Ամփոփելով փաստենք, որ տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք, իրենց հերթին, ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը հանգեցնում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության զարգացման համար չափազանց կարևոր է ձևավորել հարկաբյուջետային այնպիսի համակարգ, որը կխթանի արդյունաբերության ակտիվացումը, ազատ մրցակցության հաստատումը, ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը, պետության գործառույթների արդյունավետ իրականացումը, բնակչության սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարումը և տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովումը:

[1] ՀՀ ԿԱ ՊԵԿ, Հարկային վիճակագրություն, 2013 թ., 2014 թ., 2015 թ., 2016 թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ աղյուսակ:

Ըստ 2017–2019 թթ. ՄԺԾԾ-ի՝ առաջիկա տարիներին հարկային համակարգի կատարելագործման կարևոր ուղղություններն են լինելու՝

- հարկման դրույքաչափերի չեզոքության ապահովումը,
- հարկման բազաների օպտիմալացումը դրանց որոշման սկզբունքների ու կանոնների վերանայմամբ,
- հարկերի հաշվարկման և վճարման կարգի կատարելագործումը հարկերի հաշվարկումը և վճարումը պարզեցնելու և ազատականացնելու միջոցով,
- հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության շրջանակի նեղացումը,
- տնտեսության ստվերային շրջանառությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով գործարքների և առանձին ապրանքների փաստաթղթավորման նկատմամբ պահանջների ու հսկողության խստացումը,
- հարկային վարչարարության աստիճանական կատարելագործումը,
- հարկ վճարողների սպասարկման մակարդակը բարելավելու համար նոր համակարգերի ու գործիքների ներդրումը:

2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում ևս, այս տեսանկյունից, նախանշվում են բարելավման հիմնական ուղիներ, մասնավորապես.

ա) Հարկային եկամուտների հավաքագրման համեստ մակարդակը, որն իր արտացոլումն է գտնում նաև հարկեր/ՀՆԱ հարաբերակցության մեջ, մշտապես եղել և շարունակում է մնալ պետական եկամուտների համակարգի հիմնական խնդիրը:

բ) Լրացուցիչ հարկային եկամուտներ հավաքագրելու հնարավորությունների ու սահմանափակումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լրացուցիչ հարկային եկամուտներ ձևավորելու՝ տնտեսության ներուժի ընդլայնումը ապահովվելու է հետևյալ երկու ուղղությամբ.

1) *տնտեսության ճյուղային կառուցվածքի վերափոխում* այնպես, որ դրանում գերակշռեն առավել հարկունակ ճյուղերը,
2) *հարկային եկամուտների հավաքագրման լրացուցիչ (դեռևս չօգտագործվող) ներուժ ունեցող հարկատեսակների ընտրություն* և դրանց մասով հարկային քաղաքականության վերանայում այնպես, որ ամրապնդվեն հարկման հորիզոնական ու ուղղահայաց արդարության սկզբունքները և սահմանվի հարկային բեռի օպտիմալ մակարդակ:

գ) Վերոնշյալի համատեքստում մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածում պետության հարկային մուտքեր ապահովող քաղաքականության շրջանակներում ընդգծված կարևորություն է տրվելու *հարկման հորիզոնական և ուղղահայաց արդարության սկզբունքների ամրապնդմանը*, գործարար միջավայրի համատեքստում՝ վարչարարության արդյունավետության բարձրացմանը և հիմնավորված դրույքաչափերի կիրառմանը:

դ) Հարկման հորիզոնական արդարության սկզբունքը նախատեսում է համանման տնտեսական պայմաններում գործող հարկ վճարողների նկատմամբ *հարկման միևնույն կանոնների և կարգավորումների կիրառություն*:

Կարևոր է միասնական հարկային օրենսգրքի ներդնումը մեր երկրի երկարաժամկետ և կայուն զարգացման տեսանկյունից: Միջազգային լավագույն փորձին համահունչ հարկային օրենսգրքի մշակումը և ներդրումը կարևոր խթան կհանդիսանա մեր երկրի գործարար միջավայրի հետագա բարելավման և ազգային տնտեսության ու ներդրումային գրավչության բարձրացման գործում: Երկարաժամկետ հատվածի հարկային օրենսգիրքը կբխի տնտեսության զարգացման հեռանկարային հայեցակարգից և կնպաստի գործարար միջավայրի բարելավմանը:

КАРИНЕ МИКАЕЛЯН

НАЛОГОВАЯ ПОЛИТИКА И ЕЁ ВЗАИМОСВЯЗЬ В ОБЛАСТИ УСТОЙЧИВОГО ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ АРМЕНИИ

Ключевые слова: *налоговая политика, реформы, налоговая система, фискальная функция, экономическое развитие, налоговый кодекс*

Налоговая политика является компонентом социально-экономической политики государства, которая и определяет цели существующей налоговой системы. Высокий уровень экономического роста обеспечивает существенную предпринимательскую прибыль, что, в свою очередь, и обеспечивает более высокие налоговые поступления в бюджет страны. И наоборот, низкий уровень экономического роста приводит к более низкому уровню налогов и, соответственно, большей потребности в государственной поддержки и помощи.

KARINE MIKAYELYAN

TAX POLICY AND ITS INTERRELATION WITH SUSTAINABLE ECONOMIC DEVELOPMENT OF ARMENIA

Key words: *tax policy, reforms, taxation system, fiscal function, economic development, tax legislation*

The tax policy is one of the components of social-economic policy of the state, which determines the goals of existing and newly formed tax system. High level of economic growth leads to significant entrepreneurial profit, which, in turn, contributes higher tax revenues to the country's budget. Conversely, a low level of economic growth leads to a lower level of collected taxes and consequently a greater need for state support.